*Աջարա վտակը, ընդունելով աջից* Գեգելաձէ, Ախօ *եւ* Ցանարիսի *առուները, որոնք բղխում են Թերատ լ–ից եւ ոռոգում համանուն գեղերը: Գեգելաձէ լեռնից իջնում է նոյն անուն առուակը եւ ոռոգում է* Գեգելաձէ *գեղը: Ապա խառնւում են* Տբետ, Վարջանիսի, Ջվարէ, Ձեսօպելի, Ձեդախերտվիս Ն., Գուլեբի, Ցխեմլի *եւ* Ձենդիտի *առուակները համանուն գեղերից. իսկ ձախ կողմից ընդունում է* Դաբացվրելի, Կայաբաշի, Օրգիալի, Դանդալօ, Կոկոնտաուրի, Կոնտաուրի, Ցխմորեսի, Աբուկետի, Կվաշտա, Վայիօ, Ակուցա *եւ հասնում է* Կեդա *աւանը:*

*Կեդայից քիչ արեւմուտք Աջարային խառնւում են* Շավաբուրի *եւ ապա* Մորխի *վտակները, որոնք իջնում են Կորդա լ–ից եւ միանում են ձախից* Կորդա *առուակին. ոռոգում են* Ագոտա, Մեծիբնի, Կելատի, Նամոնասթրեվի, Սոմխար – Շավաբուրի, Կուչուլա, Ջագրեստավի, Մերիսի, Սամզգերի, Սամսարի, Ալիֆ օղլի, Սամզգորշվաբուրի, Որցվա, Օրթամէիլէ, Խոխնիէդերէ, Ջէնիմինա *եւ* Արսանաուր *գեղերը իրենց պարագաներով: Կեդայից արեւմտահարաւ ուղղուելով Աջարա վտակն ընդունում է աջից* Ագարա[1], Մախունցետի Փ.,

---

1 *Ագարակները ինչպէս շատ էին Իսպիրում, Բաբերտանում, Կիսկիմում, Թորթումում, Օլթիում, նույնպէս շարունակում են Շաւշէտ-Իմերխեւում, Արդանուչ-*